ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 26 - Ա
24 փետրվարի 2015 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրմանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002թ. օգոստոսի 1-ի թիվ 40 որոշմամբ հաստատված ,,Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգ,,-ի 9-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ Միքայել Եղիազարյան /Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ/, Կարեն Բարսեղյան /Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ/՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի ներկայացուցիչներ, Յուրա Մուշեղյան /Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/, Վարդանուշ Մնացականյան /Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, Մելանյա Հովակիմյան /Գավառի թիվ 3 հիմնական դպրոցի տնօրեն/, Հրաչիկ Ասատրյան /Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն/՝ ուսումնական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
2. Ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակել Մ.Եղիազարյանին, քարտուղար՝ Կ. Բարսեղյանին:
3. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված ատեստավորման ավարտից հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ